Մարիամ Այվազյան[1]

ՈՐԲ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1124-րդ հոդվածի համաձայն՝ հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց դրա օգտագործումը: Սովորական իրավիճակում անձը, ով ցանկանում է օգտագործել այլ անձին պատկանող ստեղծագործությունը, պետք է կապ հաստատի իրավատիրոջ հետ և ստանա նրա թույլտվությունը հեղինակային իրավունքի օբյեկտը օգտագործելու համար: Եթե իրավատերը հայտնաբերվում է և մերժում է տալ իր համաձայնությունը, օգտագործողը չի կարող օգտագործել հեղինակային իրավունքի օբյեկտը, բացառությամբ այն դեպքերի, երբ թուլատրվում է իրականացնել ստեղծագործության օգտագործումն առանց հեղինակի համաձայնության և առանց վարձատրության: Մյուս կողմից էլ իրավատերը կարող է տալ իր համաձայնությունը որոշակի պայմաններով, օրինակ՝ հատուցման վճարմամբ կամ առանց դրա: Այն դեպքերում, երբ իրավատերը չի կարող անհատականացվել կամ հայտնաբերվել, օգտագործողը առերեսվում է անորոշության հետ: Նա չի կարող որոշել, թե ինչ պայմաններով իրավատերն իրեն կթույլատրեր օգտագործել ստեղծագործությունը: Երբ օգտագործումը դուրս է գալիս ազատ օգտագործման սահմաններից, միշտ էլ կա հավանականություն, որ իրավատերը կհայտնվի և օգտագործողը պատասխանատվություն կենթարկվի հեղինակային իրավունքի խախտման համար: Ստեղծված իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ ստեղծագործությունները ընդհանրապես չօգտագործվեն, ինչը չի բխում հանրային շահից, մանավանդ երբ իրավատերը արդեն գոյություն չունի կամ հետաքրքրված չէ իր աշխատանքի հետագա ճակատագրով[2]: Այս իրավիճակներում էլ ի հայտ է գալիս որբ ստեղծագործությունը-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Տարիել Բարսեղյան:

[2] Տե՛ս Report on orphan works. A Report of the Register of Copyrights, 2006, էջ 13:

ների օգտագործման իրավական կարգավորման անհրաժեշտությունը:

Որբ ստեղծագործություններ եզրույթը ծագել է ԱՄՆ-ում և օգտագործվում է այն դեպքերում, երբ ստեղծագործության «ծնողը»[1] անհայտ է կամ անհասանելի: Թեև արդեն իսկ 1950-ական թվականներից որոշ երկրներում (Հնդկաստան, Ճապոնիա, Կանադա և այլն) գոյություն ունեին իրավական կարգավորումներ որբ ստեղծագործությունների վերաբերյալ, սակայն այս հարցը ակտիվորեն սկսվեց քննարկվել 1990-ական թվականներին և առավել հրատապ դարձավ 2004 թվականին, երբ սկսվեց Google գրքեր նախագիծը, որի արդյունքում էլ ի հայտ եկան հեղինակային իրավունքով պաշտպանող ստեղծագործությունների թվայնացման արդյունքում առաջացող մի շարք խնդիրներ: Խնդիրը ուսումնասիրությունը այնքան կարևոր էր, որ 2006 թվականին հրապարակվեց ԱՄՆ-ի Հեղինակային իրավունքի գրասենյակի զեկույցը (այսուհետ՝ ԱՄՆ Զեկույց) որբ ստեղծագործությունների վերաբերյալ, հետագայում նմանատիպ զեկույցներ հրապարակվեցին նաև ԵՄ-ում: Հարկ է նշել, որ որբ ստեղծագործությունների օգտագործման հետ կապված խնդիրները պայմանավորված են մի շարք գործոններով: Առաջին գործոնը այն է, որ մի շարք երկրներում Բեռնի կոնվեցիայի անդամակցությամբ վերացվեցին հեղինակային իրավունքի պաշտպանության համար սահմանվող ձևականությունները: Եթե նախկինում հեղինակային իրավունքով պահպանվում էին միայն գրանցված ստեղծագործությունները, ապա ձևականությունների վերացմամբ ստեղծագործությունները սկսեցին պաշտպանվել ստեղծման փաստի միջոցով: Երկրորդ գործոնը հեղինակի գույքային իրավունքների գործողության ժամկետների երկարաձգումն է: Այսպես՝ Մեծ Բրիտանիայում, օրինակ, գույքային իրավունքների գործողության ժամկետները նախորդ դարում 14 տարուց դարձել են հեղինակի մահվանից հետո 70 տարի[2]: Մեր երկրում նույնպես գույքային իրավունքների ժամկետը երկարձգվել է: ՀՍՍՀ 1964 թվականին ընդունված քաղաքացիական օրենսգրքով սահմանվում էր, որ հեղինակային իրավունքը գործում է հեղինակի

---

[1] Տե՛ս Report on orphan works. A Report of the Register of Copyrights, 2006, էջ 34:

[2] Տե՛ս Orphan Works: Causes of the Problem, University of North Carolina (UNC) at Chapel Hill - School of Law; University of California, Berkeley - School of Law, 2012, էջ 6:

ամբողջ կյանքի ընթացքում և նրա մահից հետո 25 տարի, այնուհետ 1996 թվականին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով այդ ժամկետը դարձավ 50 տարի: Ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1131-ին հոդվածով սահմանվում է, որ հեղինակի գույքային իրավունքները գործում են հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո՝ 70 տարի: Որբ ստեղծագործությունների խնդիրը հրատապ է դարձել նաև այն փաստի պատճառով, որ նոր տեխնոլոգիաները թույլ են տալիս իրականացնել հեղինակային իրավունքով պահպանվող ավելի շատ ստեղծագործությունների ստեղծում, ամրագրում և պահպանում: Նոր ստեղծվող ստեղծագործությունների քանակը հսկայածավալ է: Գոյություն ունի հայտնի հետազոտություն, որով փորձ է կատարվել գնահատել յուրաքանչյուր տարի ստեղծվող տեղեկատվության ծավալը՝ հաշվի առնելով թվային դարաշրջանում տեղեկատվական հոսքը:Կատարված հետազոտությունների համաձայն միայն 2002 թվականին 5 էքսաբայթ նոր տեղեկատվություն է ստեղծվել, որը հավասարազոր է ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի մեծության 37 հազար նոր գրադարանների ստեղծմանը, ընդ որում նոր ստեղծված ստեղծագործությունների մեծ մասը որբ են[1]: Վերոգրյալ և մի շարք գործոնների պատճառով բավական մեծացել է որբ ստեղծագործությունների քանակը[2], և առավել հրատապ է դարձել որբ ստեղծագործությունների օգտագործման համար իրավական մեխանիզմների որոնումը: Ուստի սույն աշխատանքում փորձ կկատարվի ներկայացնել խնդրի լուծման համար հնարավոր ուղիները և դրանց ներդրումը մեր երկրում[3]:

---

[1] Տե՛ս Orphan Works: Causes of the Problem, University of North Carolina (UNC) at Chapel Hill - School of Law ; University of California, Berkeley - School of Law, 2012, էջ 8:

[2] Անընդհատ փորձ է կատարվում գնահատել որբ ստեղծագործությունների քանակը, այսպես Բրիտանական գրադարանի գնահատականներով բոլոր տպագրված աշխատանքների 40% որբ են:

[3] Մեր երկրում որբ ստեղծագործությունների վերաբերյալ խնդիրը դեռևս հրատապ չէ: Եթե ամբողջ աշխարհում որբ ստեղծագործությունների օգտագործման պայմանների սահմանման առաջին ջատագովները գրադարանները և թանգարաններ են, որոնք չեն կարողանում թվայնացնել պատմական նշանակություն ունեցող ստեղծագործություններ, քանի որ դրանք որբ են,

Մինչև խնդրի լուծման առաջարկվող ուղիներին անդրադառնալը, անհրաժեշտ է անդրադառնալ որբ ստեղծագործությունների սահմանման որոշ հիմնախնդիրների: Ինչպես արդեն նշվել է, որբ են այն ստեղծագործությունները, որոնց հեղինակն անհայտ է կամ հնարավոր չէ կապ հաստատել նրա հետ: Նշված ձևակերպումը ամրագրված է նաև մի շարք երկրների օրենսդրությամբ (Ճապոնիա, Հունգարիա, Կանադա և այլն): Պետք է, սակայն, նշել, որ որբ ստեղծագործությունների հիմնախնդիրը քննարկելիս շատ հաճախ նկարագրվում է այն իրավիճակը, երբ իրավատերը անհատականացվում է, պարզվում է նրա գտնվելու վայրը և օգտագործողը թույլտվություն ստանալու համար փորձում է կապ հաստատել իրավատիրոջ հետ, սակայն պատասխան չի ստանում նրանից կամ ստանում է իրավատիրոջ մերժումը, կամ առաջարկվում է թույլտվության համար շատ բարձր վճար: Որոշ դեպքերում նշվում է, որ ստեղծված իրավիճակում նույնպես խոսքը գնում է որբ ստեղծագործությունների մասին[1]: Սակայն կարծում ենք, որ նշված մոտեցումը արդարացված չէ, քանի որ նման պարագայում կխախտվեր հեղինակային իրավունքի հիմնարար սկզբունքը, այն է՝ իրավատիրոջ բացառիկ իրավունքը թուլատրելու օգտագործել իր ստեղծագործությունը: Ուստի՝ այն պահից, երբ իրավատերը հայտանաբերվել է, որբ ստեղծագործությունների մասին խոսք լինել չի կարող:

Որոշակի դեպքերում ստեղծագործությունը որբ համարելու հանգամանքը առաջարկում են կապել ստեղծագործության [2]տարիքի հետ: Իհարկե, ակնհայտ է, որ «առավել մեծ տարիքի» ստեղծագործությունը առավել հավանական է, որ կլինի որբ, սակայն ստեղծա-

---

ապա Հայաստանում այս խնդիրը, կարծես թե, դեռևս չի քննարկվում: Այսպես՝ ՀՀ Ազգային գրադարան ուղղված հարցմանը, թե քանի անանուն ստեղծագործություն է պահվում գրադարանում, գրադարանը պատասխանել է, որ Ազգային գրադարանը նման հաշվառում չի իրականացնում, այսինքն՝ կարելի եզրակացնել, որ մեր մոտ նշված խնդիրը դեռևս չի բարձրացվել: Սակայն հավանական է, որ նշված խնդիրը հրատապ դառնա որոշ ժամանակ անց, ինչի պատճառով էլ աշխատանքում բարձրացվել են որբ ստեղծագործությունների իրավական կարգավորման որոշ հիմնախնդիրներ:

[1] Տե՛ս Report on orphan works. A Report of the Register of Copyrights, 2006, էջ 60:

[2] Տե՛ս Report on orphan works. A Report of the Register of Copyrights, 2006, էջ 113:

գործության որբ լինելը տարիքի հետ կապելը, մեր կարծիքով, այդքան էլ նպատակահարմար չէ: Կարևոր հատկանիշը այն է, որ իրավատերը չպետք է լինի հայտնի կամ հասնելի, իսկ ստեղծագործության տարիքը այս դեպքում էական չէ: Ժամկետները կարևոր են միայն այն դեպքերում, երբ լրացել են գույքային իրավունքների գործողության ժամկետը: Այն պահից սկսած, երբ լրացել են օրենքով սահմանված ժամկետները և ստեղծագործությունը վեր է ածվել հանրային սեփականության որբ ստեղծագործությունների մասին խոսք լինել չի կարող: Նշվում է նաև, որ որբ կարող են համարվել միայն հրապարակված աշխատանքները[1]: Կարծում ենք՝ նման մոտեցումը նույնպես ընդունելի չի կարող համարվել, քանի որ իրավական պահպանություն պետք է տրամադրել ինչպես հրապարկված, այնպես էլ չհրապարակված աշխատանքներին: Բավական հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ անընդհատ փորձեր են կատարվում որբ ստեղծագործությունների շարքից հանել ստեղծագործությունների այս կամ այն տեսակները: Այսպես՝ ԱՄՆ-ում, երբ որբ ստեղծագործությունների վերաբերյալ զեկույցն էր պատրաստվում, ներկայացվում էին մեկնաբանություններ, որ որբ ստեղծագործություններ չեն կարող համարվել երաժշտական ստեղծագործությունները, քանի որ յուրաքանչյուր ստեղծագործության հեղինակ կարող է հայտնաբերվել կատարողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների միջոցով: Սակայն, կարծում ենք, առավել հիմնավոր է այն դիրքորոշումը, որ որբ ստեղծագործություն կարող է ճանաչվել ցանկացած ստեղծագործություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ որբ ստեղծագործություն եզրույթն օգտագործվում է այն իրավիճակը նկարագրելու համար, երբ հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործության իրավատերը չի կարող անհատականացվել կամ հայնատանբերվել այն անձի կողմից, ով ցանկանում է օգտագործել ստեղծագործությունը այնպիսի եղանակով, երբ անհրաժեշտ է իրավատիրոջ համաձայնությունը:

Մյուս կարևոր հանգամանքը, որ պետք է քննարկել դա այն է, որ որբ ստեղծագործությունը օգտագործողը կարող է օգտագործել կամ

[1] Տե՛ս նույն տեղում:

օգտագործելու թույլտվություն[1] ստանալ ստեղծագործությունը միայն այն դեպքերում, երբ ողջամիտ ջանքեր[2] է գործադրել իրավատիրոջը անհատականացնելու կամ հայտնաբերելու համար: Որբ ստեղծագործությունների վերաբերյալ ԱՄՆ զեկույցում նշվում է, որ յուրաքանչյուր դեպքում որոնման համար գործադրված ողջամիտ ջանքերը գնահատելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները.

✓ Ստեղծագործությունը անհատականացնող տեղեկատվության քանակը՝ հաշվի առնելով այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են հեղինակի անունը, ստեղծագործության վերնագիրը, հեղինակային իրավունքով պաշտպանված լինելու նշանի առկայությունը,

✓ Հանրությանը աշխատանքի հասանելիությունը,

✓ Աշխատանքի տարիքը,

✓ Այն հանգամանքը, թե արդյո՞ք աշխատանքի վերաբերյալ տեղեկատվությունը կարելի է գտնել հանրությանը հասանելի միջոցներով, թե ոչ,

✓ Արդյո՞ք իրավատերը դեռ ողջ է կամ կազմակերպությունը, ում պատկանում են հեղինակային իրավունքները գոյություն ունեն, թե ոչ, արդյո՞ք իրավատերերի փոփոխությաան վերաբերյալ տեղեկատվություն առկա և որքանով է այն հասանելի

✓ Օգտագործման ծավալը. այն իրականացվում է առևտրային, թե ոչ առևտրային նպատակներով:

Հարկ է նշել, որ ողջամիտ որոնման պահանջը ամրագրված է մի շարք երկրների օրենսդրությամբ: Հունգարիայում որոնման արդյունքները պետք է հաստատվեն գրավոր ապացույցներով: Օրենքը թվում է այն աղբյուրները, որտեղ պետք է իրականացվի որոնում: Դրանք են՝ մտավոր սեփականության գործակալության հեղինակային իրավունքների գրանցման կամավոր գրանցամատյանը, գույքային իրավունքների կառավարման կոլեկտիվ կազմակերպությունևե-

---

[1] Որբ ստեղծագործությունը օգտագործելու կամ օգտագործելու թույլտվություն ստանալու ընթացակարգերը կքննարկվեն աշխատանքի հաջորդ հատվածում:

[2] Հարկ է նշել, որ և՛ պրակտիկայում, և՛ գրականության մեջ օգտագործվում են ողջամիտ ջանքեր, պատշաճ ջանասիրություն և այլ եզրույթներ: Մեր կողմից աշխատանքի հետագա շարադրանքում հիմնականում կօգտագործվեն *ողջամիտ ջանք, պատշաճ որոնում* եզրույթները:

րի տվյալների բազաները, հանրությանը հասանելի հավաքածուները և արխիվները, պրոդյուսերներին և հրատարակիչներին ներկայացնող կազմակերպությունների տեղեկատվական աղբյուրները և այլ տեղեկատվական բազաներ: Անհրաժեշտ է նաև որոնել համահեղինակների և նախկին իրավատերերի վերաբերյալ տեղեկատվությունը: Ողջամիտ որոնման կարևոր նախապայման է, որ հայատարարություն տեղադրվի տեղական թերթում իրավատերերին հայտնաբերելու համար: [1]

Ճապոնիայում միջինը պատշաճ որոնում իրականացնելու համար պահանջվում է 27,4 օր, և պատշաճ որոնման պահանջները պահպանված համարվելու համար օգտագործողը պետք է.

- իրականացնի որոնումներ, այդ թվում՝ համացանցի միջոցով, այնպիսի տվյալների բազաներում, որոնք կարող են պարունակել իրավատիրոջ անունները և հասցեները,
- հարցումներ իրականացնի իրավունքների կառավարման կոլեկտիվ կազմակերպությունների և այն անձանց շրջանակում, ովքեր առնչվում են դիմումում ներկայացած նմանատիպ ստեղծագործությունների հետ,
- թերթում կամ հեղինակային իրավունքների ուսումնասիրման և տեղեկատվական կենտրոնի կայքում տեղադրել հայտատատրություն[2]:

ԱՄՆ զեկույցում առաջարկվում է որոնումը համարել պատշաճ, եթե որոնումը իրականացվել է հեղինակային իրավունքի գրասենյակի գրանցամատյաններում, համացանցային որոնողական համակարգերում, առցանց հեռախոսագրքերում և հասցեագրքերում, տպագրված հեռախոսագրքերում (եթե իրավատիրոջ գտնվելու աշխարհագրական վայրը հայտնի է) առևտրային խմբերի կամ մասնագիտական խմբերի, կատարողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների տվյալների բազաներում[3]:

---

[1] Տե՛ս Copy right, and the regulation of Orphan works. A comparative review of seven jurisdiction and a rights clearance simulation.2013, էջ18:

[2] Տե՛ս Copy right, and the regulation of Orphan works. A comparative review of seven jurisdiction and a rights clearance simulation, 2013, էջ 45:

[3] Տե՛ս Report on orphan works. A Report of the Register of Copyrights. 2006, էջ 113:

Բավական հետաքրքրական է Մեծ Բրիտանիայում առաջարկվող կարգավորումը: 2014 թվականին «Հեղինակային իրավունքի մասին» ակտում կատարվել են փոփոխություններ, որոնցով հասանելություն տրամադրվել մոտ 91 միլիոն որբ ստեղծագործությունների և առաջարկվել է որբ ստեղծագործությունների լիցենզավորման համակարգ: Լիցենզավորման համար անհրաժեշտ է, որ օգտագործողն իրականացրած լինի ողջամիտ որոնում: Ընդ որում օրենսդրական մակարդակով ամրագրվում է միայն ողջամիտ որոնման պահանջը, իսկ գնահատումը իրականացվում է յուրաքանչյուր տեսակի ստեղծագործության համար ողջամիտ որոնումը գնահատելու համար հրատարակված առանձին ուղեցույցների (50-60 էջ) հիման վրա: Ներկայումս այդպիսի ուղեցույցներ կան ֆիլմերի, գրական ստեղծագործությունների, արվեստի ստեղծագործությունների համար[1]:

Մեր կարծիքով անհնար է սահմանել ողջամիտ որոնման մեկ միասնական բանաձև: Հաշվի առնելով՝ մի շարք հանգամանքներ ողջամիտ որոնումը պետք է ամեն անգամ ինքնուրույն գնահատման ենթարկվի: Օրենսդրական մակարդակով անհրաժեշտ է ամրագրել միայն նվազագույն պարտադիր գործողությունները, որոնք պետք է կատարվեն՝ ամրագրելով որ յուրաքանչյուր կոնկրետի դեպքի համար ողջամիտ որոնումը պետք է գնահատման ենթարկվի: Հաշվի առնելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի բովանդակությունը՝ մեր կարծիքով Հայաստանի Հանրապետությունում որբ ստեղծագործությունների իրավական կարգավորում նախատեսելիս նպատակահարմար է սահմանել, որ ողջամիտ որոնումը պարտադիր պետք է կատարվի գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպության, նոտարի և օրենքով համապատասխան լիազորություն ունեցող այլ կազմակերպությունների (ստեղծագործության ի պահ հանձնված լինելու դեպքում) տվյալների բազաներում: Անհրաժեշտ է ամրագրել, որ որոնում պետք է կատարել նաև համացանցային որոնողական համակարգերում: Որոնումը ողջամիտ համարելու համար անհրաժեշտ է նաև հայտարարություն հրապարկել առնվազն 3000 տպաքանակ ունեցող հանրապետական տպագիր մամուլում, ինչպես նաև հրապարակային ծանու-

[1] Տե՛ս Orphan works Licensing Scheme Overview for Applicants.

ցումների պաշոնական՝ azdarar.am կայքում: Սրանք այն նվազագույն պայմաններն են, որոնք պետք է իրականացվեն:

Կատարյալ աշխարհում ողջամիտ որոնման պահանջն իրականացնելը, արդեն իսկ բավարար կլիներ որբ ստեղծագործությունների հետ կապված խնդիրները լուծելու համար, քանի որ եթե օգտագործողը չկարողանար գտնել իրավատիրոջը նման դեպքերում կա՛մ իրավատերը չպետք է գոյություն ունենար, կա՛մ չպետք է հոգ տաներ ստեղծագործության հետագա օգտագործման համար և բնականաբար խախտման, պատասխանատվության մասին խոսք լինել չէր կարող[1]: Սակայն իրականությունը այլ է, և շատ հաճախ առաջանում են իրավիճակներ, երբ որոշ ժամանակ անց իրավատերերը հայտնվում են, ուստի անհրաժեշտ են համապատասխան կարգավորումներ:

Որբ ստեղծագործությունների օգտագործման հետ կապված խնդիրները լուծելու համար գոյություն ունեն մի շարք մոտեցումները: Հիմնականներն են սահմանափակ պատասխանատվության, ընդլայնված կոլեկտիվ լիցենզավորման և կենտրոնացված լիցենզավորման համակարգերը:

Սահմանափակ պատասխանատվության մոդելը նկարագրված է ԱՄՆ հեղինակային իրավունքների գրասենյակի զեկույցում: Զեկույցի հիման վրա Կոնգրես է ներկայացվել 3 օրինագծեր, որոնք տապալվել են: Նշված համակարգի էությունն այն է, որ օգտագործողներն ուղղակի կատարում են ողջամիտ որոնում և այնուհետ իրագործում օգտագործումն առանց որևէ ձևականության: Բացի դրանից առաջարկվում է սահմանել օգտագործողի՝ էսքրոու հաշիվ բացելու պարտականությունը, որում նա պետք է մուտքագրի որոշակի գումար: Գումարը պետք է վճարվի իրավատիրոջը, եթե վերջինս ի հայտ գա: Այն դեպքերում, երբ օգտագործողը կատարում է պատշաճ որոնում, ապա օգտագործողի կողմից վճարվող փոխատուցումը իրավատիրոջ ի հայտ գալու դեպքում պետք սահմանափակվի երկու եղանակով.

1. Պետք է օգտագործման համար վճարվի ողջամիտ դրամական փոխհատուցում, եթե օգտագործումն առևտրային նպատակ է հետապնդել: Եթե օգտագործումը կատարվել է ոչ առևտրային նպա-

[1] Տե՛ս Report on orphan works. A Report of the Register of Copyrights, 2006, էջ 90:

տակներով փոխհատուցում չպետք է վճարվի: Որպես կանոն դրամական փոխհատուցումից պետք է հանվեն ստատուտային կամ, այսպես կոչված, օրենսդրական վնասները և փաստաբաններին տրամադրվող գումարները:

2. Օգտագործողին չի կարող պահանջ ներկայացվել դադարեցնել հետագա օգտագործումը, եթե օգտագործման արդյունքում ստեղծվել է այնպիսի ածանցյալ ստեղծագործություն, որում օգտագործողի ներդրումը էական է, կամ դատարանը ոչ նպատակահարմար է գտնում օգտագործման դադարեցումը[1]:

Հարկ է նշել, որ զեկույցում որպես առաջարկ սահմանվում էր նախատեսել ընթացակարգ, որով ամրագրվելու է Կոնգրեսի կողմից որոշակի ժամանակ անց օրենքը վերանայելու հնարավորությունը, եթե հետագայում լրացուցիչ ընթացակարգերը, օրինակ՝ օգտագործողների գրանցամատյանը կլինի ավելի արդունավետ և պրակտիկ միջոց:

Նշված համակարգը, թեև օժտված է որոշ առավելություններով, սակայն այստեղ մեծ է անորոշությունը, որովհետև իրավատիրոջ ի հայտ գալու դեպքում պետք է ամեն անգամ գնահատվի ողջամիտ հատուցման չափը: Բացի դրանից հետաքրքրական է, որ այս համակարգով որբ ստեղծագործություն օգտագործողը ամեն դեպքում համարվում է հեղինակային իրավունք խախտող, որի նկատմամբ պատասխանատվությունը ուղղակի սահմանափակված է:

Մի շարք երկրներում (Դանիա, Նորվեգիա, Նիդերլանդներ) որբ ստեղծագործություններին վերաբերող հարցերը լուծվում են ընդլայնված կոլեկտիվ լիցենզավորման համակարգի միջոցով: Հնարավոր օգտագործողները կարիք չունեն բանակցելու բոլոր իրավատերերի հետ առանձին-առանձին, այլ միայն լիցենզիա ստանալու համար վճարում են նախապես սահմանված գումար գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպությանը[2]: Դանիայում, այսպես, իրավատիրոջ որոնման պարտականությունը դրված չէ օգտագործողի վրա: Գույքային իրավունքների կառավարման կոլեկտիվ կազմակերպությունները պետք է իրականացնեն իրավատիրոջ որոնումը: Եթե երեք տարվա ընթացքում նրանք չեն կարողանում

---

[1] Տե՛ս Report on orphan works. A Report of the Register of Copyrights. 2006, էջ 113:

[2] Orpan works, WIPO Seminar, 2010, Lecture Summury, էջ 8:

անհատականացնել կամ հայտնաբերել իրավատիրոջը, ապա ստացված գումարները բաշխվում են նույն կատեգորիայի ստեղծագործություններ ստեղծող հեղինակների միջև[1]:

Հարկ է նշել, որ ներկայումս տարբեր երկրներում կիրառվում է նաև որբ ստեղծագործությունների պարտադիր լիցենզավորան համակարգը: Առաջին երկիրը, որը առաջարկել նման համակարգ[2] Ճապոնիան է: 1970 թվականին ընդունված «Հեղինակային իրավունքի մասին» օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ պատշաճ ջանքերի գործադրման արդյունքում իրավատերը չի կարող հայտնաբերվել, դիմում է ներկայացվում Մշակույթային կապերի գործակալություն[3] պարտադիր լիցենզիա ստանալու համար: Այն դեպքում, երբ դիմումատուն տրամադրվում է լիցենզիա, ապա նա պետք է վճարի որոշակի գումար, որը համապատասխանում է սովորաբար վճարվող ռոյալիթի չափին: Օրինակ՝ եթե դիմումատուն ցանկանում է օգտագործել գիրք, ամարգրված գինը կլինի 800 ճապոնական յուան[4]: Եթե դիմումատուն ցանկանում է նշված գիրքի 300 օրինակ պատճենել, ապա արդեն գումարը կհաշվարկվի հետևյալ բանաձևով՝ 800*300*7%=16.800յուան[5]:

Օտար հեղինակների ստեղծագործությունների համար տրամադրվում է լիցենզիա, եթե ստեղծագործության օգտագործումը պետք է տեղի ունենա Ճապոնիայի տարածքում: 2009 թվականին օրենքում կատարվել են որոշ փոփոխություններ, որոնց համաձայն

---

[1] Տե՛ս Copy right, and the regulation of Orphan works. A comparative review of seven jurisdiction and a rights clearance simulation, 2013, էջ23:

[2] Ճապոնիայում նշված համակարգն ընդգրկում է բոլոր ստեղծագործությունները: Հաշվի առնելով վիճակագրությունը՝ սկսած 1970 թվականից, լիցենզիաների 59% տրամադրվել է գրական, 16%՝ արվեստի, 14% երաժշտական ստեղծագործությունների, 5% քարտեզների և 1% լուսանկարների համար: Ընդհանուր առմամբ 1972-2010 թվականների ընթացքում տրամադրվել է մոտ 82 լիցենզիա:

[3] Մշակույթային կապերի գործակալությունը (**bunkachō**) հատուկ մարմին է, որը ստեղծվել է 1968 թվականի, Ճապոնիայի կրթության և գիտության նախարարության կազմում՝ ճապոնական արվեստի և մշակույթի զարգացմանը նպաստելու համար:

[4] Մեկ ճապանական յուանի փոխարժեքն է 0.0081 ԱՄՆ դոլար

[5] Տե՛ս Copy right, and the regulation of Orphan works. A comparative review of seven jurisdiction and a rights clearance simulation, 2013, էջ 45:

ավելացվել է 67bis հոդվածը, որը թույլ է տալիս օգտագործել որբ ստեղծագործությունը նաև այն ընթացքում, երբ իրականացվում է դիմումի քննությունը: Նման պայմաններում դիմումատուն որոշակի գումարի է վճարում դեպոզիտ: Այն դեպքերում, երբ դիմումը բավարարվում է, դիմումատուն պարտավոր չէ այլ գումար ևս վճարել՝ բացի դեպոզիտ վճարված գումարից:

Այն դեպքում երբ գործակալությունը բավարարում է դիմումը և տրամադրվում է լիցենզիան, այդ մասին հայտատարվում է «Official Gazette»[1]-ում:

Հունգարիայում գործում է պարտադիր լիցենզավորման համակարգը: Աշխատանքը որբ է, եթե հեղինակն անհայտ է կամ անհասանելի: Որբ ստեղծագործություններ կարող են համարվել նաև կատարումները, սակայն հարակից իրավունքների այլ օբյեկտներ չեն կարող համարվել որբ: Յուրաքանչյուր լիցենզիա տրամադրվում է 5 տարի ժամկետով և գործում է միայն Հունգարիայի տարածքում: Լիցենզիաները ոչ բացառիկ են և չեն կարող փոխանցվել: Յուրաքանչյուր լիցենզիայում նշվում է ենթադրյալ օգտագործման տիպը, ծավալը և տևողությունը: Լիցենզիայի համար վճարվող գումարը սահմանվում է գործակալության կողմից՝ կախված աշխատանքի օգտագործման ծավալից և բնույթից: Վճարը պետք է վճարվի դեպոզիտ որպես աշխատանքի օգտագործման նախապայման: Իրավատիրոջ հայտնվելու դեպքում գումարը տրամադրվում է նրան, եթե լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից անցել է 5 տարի, եթե նշված ժամանակահատվածում իրավատերը չի հայտնվում գումարը փոխանցվում է կա՛մ գույքային իրավունքների կառավարման կազմակերպություն, կա՛մ Ազգային մշակույթային հիմնադրամ: Վճարի վերաբերյալ անհամաձայնությունները լուծվում են դատարանների կողմից:

Լիցենզավորման պահանջ է ներկայացված նաև Կանադայում՝ դեռևս 1988 թվականին ընդունված ակտով: Լիցենզիան տրամադրվում է մինչև 5 տարի ժամկետով, այն չի կարող լինել բացառիկ, փոխանցելի: լիցենզիան կարող է տրամադրվել միայն հրապարակված աշխատանքի, կատարողի ամրագրված կատարման, հրապա-

[1] «The Official Gazett»-ը Ճապոնիայում հսկայական դեր է խաղում պաշտոնական փաստաթղթերի, օրինակ՝ օրենքների հրապարակման գործում:

բակված ձայնագրությունը, հեռահաղորդակցության ամրագրված ազդանշանն օգտագործելու համար;

Բացի վերոգրյալ լուծումներից գոյություն ունեն նաև այլ համակարգեր: Իսրայելի օրենսդրության համաձայն, եթե իրավատերն անհայտ է կամ չի կարող հայտնաբերվել կառավարման իրավունքները կարող են փոխանցվել պետական մարմնին, որն էլ կարող է օգտագործման իրավունք տրամադրել:

Այս առմով բավական հետքրքիր է նաև 2012 թվականին ընդունված 2012/28/ ԵՄ դիրեկտիվը: Դիրեկտիվն ուղղված են մի շարք խնդիրների լուծմանը: Դրանք են՝ որբ ստեղծագործությունների շրջանառության օրինականացումը, որբ ստեղծագործությունների կարգավիճակը ճանաչումը և ունիֆիկացիան ԵՄ-ում, ապագայում որբ ստեղծագործություններ ի հայտ գալու կանխումը, հեղինակային իրավունքների նկատմամբ վերահսկողության ընթացակարգերի սահմանումը: Դիրեկտիվը տարածվում միայն սահմանափակ թվով սուբյեկտերի (գրադարանների, ուսումնական հաստատությունների, թանգարանների, արխիվների, կինոյի և տեսալսողական ստեղծագործությունների պահպանման, հանրային հեռարձակում իրականացնող կազմակերպությունների) վրա և ընդգրկում է ստեղծագործությունների ոչ լայն շրջանակ: Այսպես, հատուկ ընդգրկված չեն լուսանկարչական և այլ պատկերները՝ հաշվի առնելով դրանց կարգավորման առանձնահատկությունները: Դիրեկտիվը հիմնականում կարգավորում է ստեղծագործությունների ոչ առևտրային օգտագործման դեպքերը:

Հայաստանի Հանարպետության օրենսդրությունն անդրադարձ չի կատարում այն ստեղծագործությունների օգտագործմանը, որոնց հեղինակը անհայտ է կամ անհասանելի, միայն սահմանվում է, որ ստեղծագործությունը անանուն կամ կեղծանունով լույսընծայման դեպքում լույս ընծայող անձը, ում անունը կամ անվանումը նշված է ստեղծագործության վրա, այլ ապացույցների բացակայության դեպքում համարվում է հեղինակի ներկայացուցիչ և այդ կարգավիճակով իրավասու է պաշտպանելու հեղինակի իրավունքներն ու ապահովելու դրանց իրականացումը: Հայաստանի Հանրապետությունում թեև որբ ստեղծագործությունների հիմնախնդիրը դեռևս հրատապ չէ, սակայն, կարծում ենք, անհրաժեշտ են արդեն իսկ ամարագրել որոշակի օրենսդրական կարգավորումներ: «Հեղինակային իրավուն-

քի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 22-27-րդ հոդվածները, թեև սահմանում են այն դեպքերը, որոնց դեպքում թույլատրվում է իրականացնել ստեղծագործության օգտագործումն առանց հեղինակի համաձայնության և հեղինակային վարձատրության, սակայն մեր կարծիքով նշվածը բավարար չէ խնդիրը լուծելու համար, քանի որ նախ նշած դրույթները վերաբերում են օգտագործման շատ սահմանափակ դեպքերին և շատ հաճախ հեղինակին հղում կատարելը պարտադիր է նման դեպքերում, մինչդեռ որբ ստեղծագործությունների դեպքում շատ հաճախ հեղինակը հայտնի չէ:

Հաշվի առնելով վերոգյալը՝ նպատակահարմար է ամրագրել որբ ստեղծագործությունների օգտագործման պայմանները՝ թույլատրելով իրականացնել ստեղծագործության օգտագործումը, եթե ստեղծագործության հեղինակն անհայտ է կամ անհասնելի, օգտագործողը ողջամիտ միջոցներ է ձեռնարկել իրավատիրոջը հայտնաբերելու համար և ստեղծագործությունը օգտագործելիս հղում է կատարվել հեղինակին, իսկ եթե հեղինակն անհայտ է, ապա նշված է, որ ստեղծագործություն որբ է: Կարծում ենք, նպատակահամար կլինի սահմանել, որ օգտագործումը կարող իրականացվել այն դեպքում, երբ օգտագործողը ստացել է լիցենզիա: Ընդլայնված կոլեկտիվ լիցենզիաների համակարգը մեր երկրում դեռևս չի կարելի օգտագործել, նշված ինստիտուտը դեռևս մեր մոտ կայացած չէ: Լիցենզիան կարող է տրամադրվել Մտավոր սեփականության գործակալության կամ այլ մարմնի կողմից, որն էլ յուրաքանչյուր անգամ կգնահատի, թե արդյոք իրականացվել է պատշաճ որոնում, թե ոչ: Լիցենզիա ստանալու համար պետք որոշակի գումար վճարել դեպոզիտ, որը լիցենզիայի ժամկետի ավարտից հետո, եթե իրավատերը չի հայտնվել, կարող է վերադարձվել օգտագործողին: Կարծում ենք, որ որոշակի դեպքերում պետք է նախատեսել նաև առանց լիցենզիայի տրամադրման որբ ստեղծագործությունների օգտագործման հնարավորությունը: Գրադարաններին, ուսումնական հաստատություններին, թանգարաններին, արխիվներին, կինոյի և տեսալսողական ստեղծագործությունների պահպանման կազմակերպություններին, հանրային հեռարձակում իրականացնող կազմակերպություններին պետք է թուլատրել առանց լիցենզիայի իրականացնել որբ ստեղծագործությունների թվայնացումը: Նկատակահարմար կլինի նաև ստեղծել որբ ստեղծագործությունների վերաբերյալ տվյալների բա-

զա, ինչը հնարավորություն կտա հետաքրքրված յուրաքանչյուր անձին լիցենզիա ստանալու համար կրկին չիրականացնել ողջամիտ որոնում, այլ ստուգել տեղեկատվությունը համապատասխան տվյալների բազայում:

Мариам Айвазян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СИРОТСКИХ ПРОИЗВЕДЕНИЙ

В статье проанализированы проблемы правового регулирования сиротских произведений. В настоящее время в разных странах не только широко обсуждается вопрос об условиях использования сиротских произведений, но и предусматриваются соответствующие правовые механизмы. В законодательстве РА данный вопрос еще не изучен, поэтому в статье не только представлены различные подходы регулирования сиротских работ, но также делается попытка предложить решения для вышеуказанных проблем.

Mariam Ayvazyan
PHD Student of the YSU Chair of Civil Law

FEATURES OF LEGAL REGULATION OF ORPHAN WORKS

The article analyzes the problems of legal regulation of orphan works. At present, the issue of the conditions of use of orphan works is not only widely discussed in different countries, but also appropriate legal mechanisms are provided. This issue has not been studied in Armenia yet, so the article does not only present different approaches to the regulation of orphan works, but also attempts to offer solutions to the above mentioned problems.

Բանալի բառեր՝ *հեղինակային իրավունք, որբ ստեղծագործություն, հավատարմագիր,ազատ օգտագործում, պատշաճ որոնում*
Ключевые слова: *авторское право, сиротские произведения, надлежащий поиск, лицензия, свободное пользование.*
Key words: *copyright, orphan work, diligent search, license, fair use.*